Ա Ի Ե Տ Ա Ի Ր Ե Ր

«Ա՛Հ ԱՍ ԵՍ ՁԵԶԻ ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԻՍ ԿՈՒՏԱՄ»։ ՂՈՒԿ. Բ. 10.

ՀԱՏՈՐ 26. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 3. 1873. ԹԻՒ 36

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իր Հօրն ապրելը կատարել։ —Երեք քայլ։ — Ապաւինութեան տեղ մը թռչիլ։ —Միայն հաւատա։ —Լրագրոց օգուտը. Այլ և այլ նշանաւոր անձանց կարծիքը։ —Վարժի և արդի կառքեր։ —Օսմանեան կայսեր վիճակի Սրուհատաւհանդէսը ղեկած գանձերը։ —Ամերիկայէն Եւրոպա օդապարիկով ճամբորդութիւն։ —Ամասիայէն նամակ մը։ —Բնութիւն Աւետարանական դպրոցին ի Պաներբան։ —Քաղաքական լուրեր։

ԻՐ ՀՕՐՆ ԱՂՕԹՔԸ ԿԱՏԱՐԵԼ

ՏՂԱՅ մը լսելով որ իր հայրը կ'աղօթէր Աւետարանի գործին համար, խնդրելով մանաւանդ Աստուծմէ որ այս գործին պիտոյքը լեցնուին, ըսաւ անոր. «Հայր, կ'ուզեմ որ քու ատակդ ինծի ըլլար»։

«Ինչո՞ւ համար, որդեակ. ի՞նչ պիտի ընէիր այն ատակը», հարցուց հայրն անոր։

Տղան պատասխանեց. «Քա՜ աչքերդ պիտի կոտրէի»։

Ծիշտն ալ որ Աստուած մեզի համար չլներ այն բանը որ մենք կրնանք անձամբ ընել, ոչ ալ կը կատարէ մեր այն աղօթքները որոնք մենք կարող ենք կատարել։

ԵՐԵՔ ՔԱՅԼ

Գիտուն աստուածաբան մը օր մը իր օրական գործին ղբաղեալ պարզամիտ Քրիստոնեչի մը մտաննալով ըսաւ անոր.

«Երկինք երթալու ճամբան երկայն և դժուարին է, այնպէս չէ՞, բարեկամ»։

«Ոչ, տէր», խսկոյն պատասխանեց մարդը, «երեխայ մըն է»։

«Երեք քայլ. ի՞նչպէս կրնայ ըլլալ, բարեկամ», ըսաւ աստուածաբանը։

«Շատ յայտնի է», պատասխանեց միւսը. «առաջին քայլ՝ զմեզ ուրանալ, երկրորդ քայլ՝ Քրիստոսի երթալ, երրորդ քայլ՝ երկինք մտնել»։

Հիացեալ պաշտօնեային տարիները ետքը խոստովանեցաւ թէ, գործնական կրօնքի մէջ իր սորված դասերուն ամենէն խորինն ու իմաստալիցը՝ պարզամիտ գեղացիէն սորված էր։

ԱՊԱՒԻՆՈՒԹԵԱՆ ՏԵՂ ՄԸ ԹՌՉԻԼ

Անգամ մը փոքրիկ թռչուն մը բաղձէ մը հալածուելով, երբ ալ կարողութիւնը հատաւ, դթած մարդու մը դիրկն ապաւինելով ծնայ հոն։ Թեւերն ու փետուրները կը դողային վախէն, և սիրտը կը բաբախեր բարի մարդուն կուրծքին դէմ, մինչ բաղէն մարդուն դլխէն վեր թռչտելով, որպես թէ կ'ուզէր ըսել, «Տուր ինձ այդ թռչնիկը որ ուտեմ»։ Արդ, այն քաղցր և դթած մարդը պիտի վռնտէ՞ իր ծոցէն և բաղէին ճիրաններուն մատնել այն խեղճ փոքրիկ արարածը որ անոր ապաստանած էր։ Ոչ երբեք։ Լաւ, ուրեմն, եթէ դու ևս ապաւինութեան համար կը թռչիս ծիտսի դիրկը որ կորուսեալը վնտռտելու և փրկելու համար եկաւ, կը կարծես թէ քեզ քու մահացու թշնամիդդ ձեռքը պիտի մատնե՞։ Ոչ երբեք, ոչ երբեք։

ՄԻԱՑՆ ՀԱՒԱՏՑ

Անգամ մը, կ'ըսէ քարոզիչ մը, տղայ մը տեսայ բարձր չէնքի մը տանիքին վրայ ուր շատ մարդիկ կը դորձէին։ Մինչ տղան անդուշութեամբ ասդին անդին կը նայէր, սահելով ինկաւ, և ինկած ատենը չուան մը բռնելով կախուած մնայ օդին մէջ, ուր միայն քիչ ժամանակ կրնար ինքզինք բռնել։ Տղան քալ գիտեր թէ վտանգաւոր էր իր դիրքը, և թէ քանի մը րոպէէն դեռևի քարերուն վրայ ինկնալով կտոր կտոր պիտի ըլլար։ Այն վայրկենին մարդասէր և ղբաւոր մարդ մը տունէն դուրս վազելով կայնեցաւ տղուն ներքևը, և բազուկները տարածելով դոչեց տղուն. «Չուանը թող, ես քեզ կը բռնեմ»։ «Չեմ կրնար», դոչեց տղան։ «Թող չուանը», դոչեց դարձեալ մարդը, «կը խոստանամ քեզի որ պիտի ազատիս»։ Տղան վայրկեան մ'ալ վարանեցաւ, և ապա թող տալով չուանը՝ ողջ առողջ ինկաւ իր ազատչին դիրկը։ Հոս պարզապէս հաւատոյ ներգործութիւն մըն էր։ Հէնց տղան դիտցաւ իր վտանգը, տեսաւ իր ազատիչը, հաւատաց անոր, և ուրիշ ամէն օգնութիւն և յոյս մերժելով ապաւինեցաւ անոր և ազատեցաւ։

Ընթերցող, դու ևս զքեզ անձամբ փրկելու չանքերդ դադրեցուր, ապաւինէ Քրիստոսի որ ընէ՝ ինչ որ քեզի համար ընել պէտք է, և պիտի փրկուիս։

Մարդ մը դեռի մը սոսկալի ջրվէժին առջև նաւ մը կը վարէ թիակով. յորձանքը կը սկսի տանել զանի դէպ ի վար, և հանդիսատեսք զանի արդէն կորսուած կը համարին։ «Գնաց», կը դոչեն, բայց քիչ մը ետքը այն թշուառ մարդուն կը նետուի չուան մը որ ջուրին մէջ մինչև նաւուն մօտ կը հասնի։ Հիմա մարդն ի՞նչ ընելու է։ Հանդիսատեսք կրնա՞ն անոր պոռալ. «Թիավարէ, չանա բոլոր ուժով ցամաքին մօտենալ», մինչ անոր ամէն մէկ անգամ թի քաշելուն նաւն աւելի կը մօտենայ ջրվէժին։ Անտարակոյս այսպէս չեն պոռար, այլ կ'աղաղակեն. «Ջուռանը քեռնէ»։ Սակայն մարդը կը չարունակէ թիավարել, և քիչ ժամանակի մէջ ջրվէժին ոտկ երթալով կը կորսուի։ Արդ յայտնի է որ այս մարդուն ազատութեան մի միայն յոյսը ոչ թէ թիավարելուն, այլ չուանը բռնելուն մէջ էր, քանդի քանի որ կը թիավարէր, չէր կրնար բռնել չուանը։ Այսպէս, մեղաւորաց յոյսը կը կենայ ոչ թէ իրենք զիրենք փրկել չանալու մէջ, այլ այն չանքերն դադրեցնել Քրիստոսի միայն ապաւինելու մէջ. քանի որ կը յուսան իրենց փրկութիւնը կատարել իրենց չանքը, պիտի չուզեն փրկուելու համար Քրիստոսի նայիլ։

Բայց ոմանք զեղծանելով չնորհաց

վարդապետութեամբ, կ'ըսեն. «եթէ իմ ընելու բանս դադրիլ միայն է ինքզինքս փրկելու ձանձրէ, և սպասել որ Քրիստոս միայն գործէ իմ փրկութիւնս, ինչո՞ւ համար յորդոր կը տըրուի ինծի բան մը ընելու։ Ինչո՞ւ համար Թոմ չի տրուիր որ հանգարտ նստիմ և սպասեմ որ Քրիստոս գայ զիս փրկելու։

Ի՞նչ պիտի ըլլար այն նաւակին մարդը, եթէ թիակները թող տալով և ձեռքը ձեռքին վրայ դնելով չուանին սպասեր գալ զանի փրկել։ Անտարակոյս պիտի մեռնէր անգործ նստելով ձեռքը ձեռքին վրայ, ինչպէս որ պիտի մեռներ թիավարելով. այո, այս երկու դէպքն ալ աղետալի էր անոր համար։ Ինոր գործն էր ջանալ բռնել։ Ասպէս ալ մեղաւորը պէտք չէ որ սպասէ իր փրկուելուն, այլ գիտնալով թէ իր վիճակը պիտի չլաւանայ իր գացած ճամբովը, իսկոյն ջիրիստոս բռնելու է փրկութեան համար։

ԼՐԱԳՐԱՅ ՕԳՈՒՏԸ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՇԱՆԱԻՈՐ ԱՆՁԱՆՑ ԿԱՐԾԻՔԸ

Պ'րդլ անուն երևելի Անգղիացի հեղինակին խօսքին նայելով, «Լրագրիդ ազգի մը մեաւոր ղօրութիւնը կ'աճեցընեն, բաղմաթիւ մարդոց պատճառ ըլլալով գործածելու իրենց կարողութիւնները, որ առանց լրագրայ թերմեռած պիտի մնային, մինչ այս առթիւ այն կարողութիւնները գործունէութեան կը մղուին»։

Լէ'քքի անուն ուրիշ Անգղիացի հեղինակ մը «Պատմութիւն Եւրոպական Բարոյականութեան» կոչուած գիրքին մէջ կ'ըսէ. «Հասարակ աստիճանի Անգղիացւոց միտքը մշակելու նկատմամբ հաւանականաբար աւելի ազդեցութիւն ունին լրագիրք քան թէ ժամանակիս ուրիշ որևիցէ գրուածները»։

Անգղիոյ այժմու առաջին պաշտօնեան կլատսթօն ալ կ'ըսէ. «Լրագրոյ ազդեցութիւնը ազդերուն կենաց բոլոր առէջին մէջ հիւսուած ազդեցութիւն մըն է։ Առաւելապէս բարւոյն մանաւանդ քան թէ չարին գործիք եղած են լրագիրք»։

Դորդուել անուն գաղիացի հեղինակը կ'ըսէ. «Լրագիրները կը ծառայեն ոչ միայն աղատութիւնը պաշտպանելու, հապա նաև քաղաքակրթութիւնը պահելու»։

Ամերիկայի Միացեալ Նահանգաց երրորդ Նախագահը Ջէֆֆերսըն կ'ըսէ. «Կ'ուզէի մանաւանդ ապրիլ այնպիսի երկիր մը ուր լրագիրներ կան բայց կառավարութիւն չկայ, քան այնպիսի երկիր մը ուր կառավարութիւն կայ և լրագիր չկայ»։

Անուանի Ամերիկացի քարոզիչը Փիչէր կ'ըսէ. «Մամուլը բեմ մըն է որ սահման չունի, և արդի ընկերութեան մէջ չկայ ղօրութիւն մը որ ասոր հետ կրնայ բաղդատուիլ»։

ՎԱՂԵՄԻ ԵՒ ԱՐԴԻ ԿԱՌՈՒՑՔ

Կառարչաւը վաղեմի ժամանակները Յունաց սիրելի խաղն էր։ Հռոմայեցւոց մէջ ալ հետզհետէ տերութեան պաշտօնատարաց համար վրան գոց, կակուղ բարձերով զարդարուած, երկանիւ և աստղինաւ ծածկուած, վրան աղեղնաձև հովանոցով մեծադին կառքեր հնարուեցան։ Հռոմ եղած յաղթանակներու առեն գործածուած կառքերն անուաւոր դահու նման էին։ Նոր կտակարանին մէջ յիշուած եթովպացի ներքինւոյն կառքը կը կարծուի թէ չորս անիւ ունէր, ինչպէս են այժմու կառքերն առհասարակ։ Գաղիոյ Ֆրանսուա Ա. թագաւորին առենը (1515–1547) Բարիզի մէջ երկու կառք միայն կար, որոնց մէկը թագուհւոյնն էր։ 1550 ին կառքերը երեք եղան, և Հենրիկոս Դ. ին գործածած կառքը ոչ փոկ ունէր և ոչ զսպանակ։ Պալատական մը որ շատ պատուաւոր անձ մըն էր, իր չափազանց գիրութեանը համար չկրնալով ձի հեծնել, սկսաւ կառքով շրջիլ, և կ'ըսուի թէ ասկէ սովորութիւն եղաւ Գաղիոյ մէջ առհասարակ կառք գործածել։ Մինչև 1553 Անգղիոյ մէջ դուռ կառք չկար, և 1625 ին հասարակաց գործածութեան համար չորս կառք միայն կար, իսկ 1637 ին կառաց թիւը սահմանուած էր 200 ըլլալ։ 1784 ին նամակները սկսան ղրկուիլ կառքով, անկէ առաջ ձիերով կը ղրկուէին, ինչպէս է ցարդ Թուրքիոյ մէջ։ Վարձու կառքեր սկսան Լոնտոնի մէջ 1823 ին. իսկ հանրակառք սկսան գործածուիլ նախ Բարիզու մէջ 1828 ին, հետևեալ տարին մտածուեցան Անգղիա։ Կոստանդնուպոլիս քաղաքը դուռ 1873 ին ունեցաւ այս տեսակ կառքեր։

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐ

ՎԻԵՆՆԱՑԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍԸ ՂՐԿԱԾ ԳԱՆՁԵՐը

Ցարեայս Ապրիլ ամսուն մէջ կոստանդնուպոլսեն Վիէննա ղրկուեցան հնութեանց գանձերու հաւաքածոյ մը՝ վեց մեծ սնտուկներու մէջ ամփոփուած։ Լընարդ Թայմզ անուն լրագրին թղթակիցը կ'ըսէ թէ այս հաւաքածոյին ամենէն գլխաւոր կտորն է Նափոր Շահին գահը։ Ասիկա հինգ ոտք բարձրութիւն և երեք ոտք լայնութիւն ունի, և չորս ոտքի վրայ կեցած է։ Ցետակ մը թանկագին փայտէ չինուած, և ծածկուած է կերպասով մը որուն վրայ բանուած են պսակաձև ծաղկեայ զարդեր՝ մարգարիտ, յակինթով և զմրխտով ընդելզուզուած։ Երբ Սուլթան Ահմէտ Գ. Հունկարիայէն իր ձեռքը քաշելու ստիպուելով՝ արևմտեան կողմն իր դէմն եկած ձախողութեան փոխարէն՝ արևելքի մէջ իր տերութիւնն ընդարձակելու ղեց, այս գահն առաւ իբրև պատերազմի աւար։ Նափոր Շահ իր այս գահը զարդարող գոհարները Հնդկաստանէն բերած էր իր հոն ըրած արշաւանաց առենը, բայց ինքն ալ պարտաւորեցաւ Ցաճկաց Սուլթանին յանձնել զանոնք։

Ուրիշ հետաքրքրական բան մ'ալ առաջին անգամ Եւրոպայի մէջ Օսմանեան իշխանութիւնը մտցնելով իր բնակութիւնն Անգրիանուպոլիս հաստատող Ա. Սուլթան Մուրատի շրջիկ զրահն ու պարսկական սաղաւարտն է։ Ցիշեալ մեծ Սուլթանն այս զրահը հագած էր, երբ Սերպիոյ երիտասարդ գինուոր մը սպաննեց զանիկա Գոսսօվոյի մօտ տեղ մը։ Ցիշեալ զրահը Դամասկոսի պղպատած շրջիկներէ չինուած է, կուրծքի ճարմանդները ոսկիէ են և մեծամեծ անդամանդներով գեղեցիկ զարդարուած է։ Պարսկական սաղաւարտն յետեւալ է ոսկւով այնպէս գեղեցիկ որ ամբողջ ոսկիէ կը կարծուի։ Վրան ալ ճերմակ և կանաչ կերպասէ և ուրիշ ոսկեթել կերպասէ փակեղ մը (սարըգ) փաթթուած է։ Ճակատին վրայ կայ ադամանդէ յակինթէ ճարմանդ մը որուն մէջ տեղն աղաւնւոյ ձուոյ մեծութեամբ չափիւղայ մը կայ. ճարմանդին ետևէն կ'ելլէ ծովային ճայի մը գեղեցիկ փետուրներովը չինուած գարդ-մանակ (օրղուճ) մը։

Կան նաև բաղնաթիւ սափորներ, պնակներ և սրուակներ հին Քրիստոնեական յախճապակիէ։ Ասոնք հաւաքած է Մուլթան Սելիմ Ա. որ եգիպտոսն նուաճեց և Ֆաթիմեանց իշխանութիւնը ջնջելով այն երկրին մէջ առաւ անոնցմէ խալիֆայութիւնը որ անկէ ի վեր Օսմանցւոց մնացած է։

Բայց ասկէ կան սուրբեր և պատերազմական կացիններ՝ որոնցմէ գրեթէ ամէն մէկը Մուլթաններէն մէկը գործածած է։ Ասոնց ամենուն վրայ ալ ոսկիէ արձանագրութիւններ կան։ Այս սուրբերէն մէկը՝ որ մի միայն պատեան չունեցողն է, կոստանդնուպոլիս առնող Մէհմէտ երկրորդինն էր, և կը կարծուի թէ այս քաղքին վրայ ըրած վերջին յարձակման առեն այս սուրը կրելով կը խրախուսէր իր զօրքը։

Ցախճապակեայ, բիւրեղեայ, արծաթեայ և ոսկիէ սափորներէ ու սրբուակներէ զատ, երկու աման ալ կայ, մէկը պղինձէ, միսը մրթէ, զորս Մէհմէտ Գ. կը գործածէր, երբ ձեռուընները կը լուար։ Ասիկա վերջին Մուլթանն է որ 1683ին Չանք ըրաւ վիէնա առնելու։

Վիէնայի Արուեստահանդէսը գրնուող այս ամբողջ հաւաքածոյին արժէքը ութ միլիոն լիրա ըլլալ կը կարծուի։

Լէվանդ Թայմզի մէջ նամակ մը կ'ըսէ թէ Լընտըն Թայմզի թղթակիցը վերոյիշեալ տեղեկութեան մէջ քանի մը սխալներ ըրած է, և ինք հետեւեալ ուղղութիւնները կ'ընէ։ Նաիր Շահին գահը ոչ թէ Ահմէտ Գ. ի, այլ Մուրատ Գ. ի յաղթանակն է։ Վերոյիշեալ զրահն ալ ոչ թէ Մուրատ Ա. ի, այլ Մուրատ Բ. ի է։ Ցախճապակեայ ամաններն ալ ոչ թէ եգիպտոսի մէջ Սելիմ Ա. ի ձեռքով հաւաքուած են, այլ Լեհացի թագաւոր մը զանոնք ընծայ ըրած է Օսմանեան թագաւորներէն մէկուն։

ԱՄԵՐԻԿԱՑԻՆ ԵՒՐՈՊԱ ՕԴԱՊԱՐԿՈՎ ՁԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Քանի տարի կայ որ Մխոթը ուայզ անուն Ամերիկացի մը կը խորհէր օդապարկով ճամբորդութիւն մը ընել Ամերիկայէն Եւրոպա։ Այս մարդը քանի մը անգամ օդապարկով եղած է, և 1859ին Ամերիկայի մէջ 1,200 մղոն տեղ դնաց նոյն կերպով։

Վերջապէս նիւ Եորքի օրըստօրական լրագիր մը ձեռնարկեց 2,000 Անգլ. լիրա տալ օդապարիկ մը չինելու համար, որով Մխոթը ուայզ կ'ուզէ 3,000 մղոն ճամբորդութիւն մը ընել ովկիանոսի վրայէն։ Այս նոր օդապարիկն է 130 ոտք բարձր, և ունի 100 ոտք տրամագիծ։ Ջրածին կազով լեցուելով՝ կարող պիտի ըլլայ 5,800 քաշ (օխա) բեռ բառնալ։ Ամէն օդապարիկ իր մէջի կազը քիչ քիչ կը կորսընցնէ, բայց հաշուուած է որ վերոյիշեալ օդապարիկն այնչափ կազ պիտի պարունակէ, որչափ բաւական է տասն օր օդին մէջ լողալու համար։ Ապահովութեան (անընկղմելի) նաւակ մը կապուած պիտի ըլլայ օդապարկին, որ, եթէ գունտը ովկիանոսի մէջ իյնայ, ճանապարհորդք չկորսուին։

Կը կարծուի թէ գունտն օդին մէջ բաւական վեր ելլելէն ետքը, պիտի հանդիպի դէպ արեւելք հոսող օդոյ յորձանքի մը, որ, ինչպէս կը կարծուի, վաթսուն ժամու մէջ օդապարիկն Ամերիկայէն Եւրոպա պիտի մղէ։ Մխոթը Ուայզ ունի օդնական մը օդապարիկը վարելու, և թեւրեւս ուրիշ անձինք պիտի ուզեն ընկերանալ։ Օգոստոսի 20ը որոշեալ օրն էր Նիւ Եորքէն ճամբայ ելլելու, և այս վտանգաւոր ուղեգնացութեան ելքը ծանուցուելուն պէս, տեղեկութիւն պիտի տրուի Աւետաբերի ընթերցողաց։ Վաթսուն ժամու մէջ Ամերիկայէն Եւրոպա երթալ, վոխանակ տասներկու օրուան մէջ երթալու, ինչպէս հիմա կ'ըլլայ չոգենաւով, արդարեւ մեծ չահ է, հապա եթէ ամենեւին Եւրոպա չհասնիմ՝։

Աւետաբերի համար։

ԱՄԱՍԻԱՑԷՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Աւետաբերի 13 թուով լրագրուած էր ընթերցողներէն աղօթք ընել, որպէս զի տեղւոյս մէջ ծագած խռովութիւնը վերնայ եւ միութիւն հաստատուի։ Հիմա ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Աստուած լսած է եղած աղօթքները եւ սէր ու միութիւն հաստատուած է հոս։ Տէրը ամէն տեղ ալ իր օրհնութեամբը լեցունէ եւ սիրոյ ու միութեան մէջ պահէ ժողովուրդը։

Անձրեւի նուաղութեան պատճառաւ ցորենին գէշէն 80 էն մինչեւ 150 ի բարձրացած էր, բայց Աստուծոյ ողորմութեամբը Մայիս 18 էն ի վեր չատ առատ անձրեւներ գալով կրկին 100 ի իջած է։

Եւրոպացի վաճառականի մը արտէն որպէս թէ հմայուած խոզի գլուխ մը դըտնուելով հասկցեր են թէ անձրեւի նուազութեան պատճառն այն է։ Ուստի չատ վորձանք բերին վաճառականին գլխուն, բայց կառավարութիւնը հաւատք չընծայելով հոգ տարաւ որ միւս մը չհասցնեն մարդուն, այսու ամենայնիւ մարդն իրեն եղած սպառնալեաց եւ տրուած նեղութեանց համար դատուիլ կ'ուզէ։ Տէրը չուտով ընդարձակէ իր թագաւորութիւնը որ ազատութիւնը վերնայ եւ սատանայական անհիմն բանտրուս հաւատք ընծայելը ջնջուի երկրէս։

Երեք ամիսէ ի վեր չատ գողութիւններ կ'ըլլան հոս. տուներէն զգեստներ, զոր օրինակ հարսի վեսի լաթեր, ոսկի զարդեր եւ ուրիշ թանկագին բաներ, կը գողնան չարունակ, եւ հոգ տանող չկայ։ Կը խնդրուի Աւետաբերի ընթերցողներէն որ եթէ տեսնեն որ եւ իցէ տեղ կասկածելի բանի մը աժան գնով ծախուիլը, բարեհաճին լուր տալ յԱմասիա։

Այս տարի մեռաքսի գործը ամէն տարիէ աւելի առատ է. մանաւանդ Տիգրանակերտի սերմը աւելի յաջողութիւն զըտած է։ Գօզային օխան 40—45 զուրուշի կը ծախուի։

ՏԻՆԿԻԼԵԱՆ Մ. ՍԵՐՈՎԲԷ

Ամասիա, Յունիս 14/23, 1863

Աւետաբերի համար։

ՓՆՆՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ Ի ՊԱՆԵՐՄԱ

Դպրոցիս քննութիւնը տեղի ունեցաւ Յուլիսի 28ին, ի ներկայութեան հայազգի պատուաւոր անձանց, որոնք քննութեան աւարտելէն յետոյ, քաջալերական խօսքերով չնորհաւորեցին աշակերտներն անոնց ըրած յառաջադիմութեանը համար։ Քննութեան միջոցին քանի մը երգեր երգուեցան ու առեղնախօսութիւններ եղան, և աւարտմանէն առաջ ալ պարզեւաբաշխութիւն եղաւ։

Մեր դպրոցը նորահաստատ լինելով դեռ 16 աշակերտ ունի արու և էգ. սոնց մէջ կան չափահասներ ալ, ու մէկ քանիները քաղքիս երեւելեաց զաւկըներն են։ Մէկին ալ 20–30 աշակերտ ունեցող դպրոցի մը վարժուհին է։ Մեր դպրոցը եկած առեներնին տասնըը չը ճանչցող աշակերտները քանի մը ամսուան մէջ ուղիղ ընթերցանութեան վարժուած են։

Դպրոցս մինչեւ հիմա միայն Հայերէն լեզուի ու թուաբանութեան և աշխարհագրութեան նաև Քրիստոնէական վարդապետութեան ուսումները աւանդած է, որոնց մէջ չատ յաջող պատասխանները տուին աշակերտներէն ոմանք քննութեան առեն։

Ե. Ա. Պ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստ. 22 ըստ Յուն. եւ Սեպտ. 3 ըստ Լատ. 1873։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Կարնոյ Տիվանը Թէհրէզ կոչուած տան Եանին նախագահը Նըֆըզ պէյ, Մուշի միւթէսարրիֆ անուանուեցաւ։

—Մայրաքաղքէս մեկնելէն առաջ, Պարսից Շահն ընդհանուր իսրայելեան Միւլլիթին կոչուած Հրէական ընկերութեան արեւելեան ճիւղին կողմէն պատգամաւորութիւն մը ընդունեցաւ։ Շահին ներկայացող պատգամաւորք ուղերձ մը ըրին անոր առջեւ Պարսկաստանի մէջ դանուող Հրէից ի նպաստ։ Այս ուղերձին պատասխանելով Շահը բաւ է թէ Պարսկաստանի Հրէից վիճակը Եւրոպական լրագրաց մէջ չափազանց դէշ ներկայացուած է։ "Ընդհակառակն", ըսաւ, "իմ Հրեայ հպատակներս վայելած են միշտ իմ արքունական պաշտպանութիւնս. և ասիկա ցուցնելու համար ձեր պատուական ընկերութեան, միայն սա կ'ըսեմ որ իմ դլխաւոր սենեկապաններէս մին ձեր կրօնակիցներէն է"։ Շահը շարունակելով իր խօսքը ըսաւ թէ իր տէրութեանը մէջ, ներկայ դարուս պահանջմանը համեմատ փոփոխութիւն մը պիտի ըլլայ, դաստիարակութեան տարածուելուն ալ մեծ փոյթ պիտի տարուի. ուստի և իսրայելացիք, ինչպէս նաև Պարսից բոլոր հպատակները, որևիցէ դասանութենէ որ ըլլան, պիտի չզրկուին այս բարեկարգութեան օգտուելէն։

—Սուլթան Ապտիւլ Ազիզ կայսր ի պատիւ Շահին Ցօլմապաղչէի պալատին մէջ ըրած խնճոյքին առեցը, եւրոպական կերպով այլ և այլ տեսակ դինիներ սեղան բերուեցան, բայց ոչ երկու վեհապետք, ոչ ալ Պարսիկ պաշտօնատարք ճաշակեցին անոնցմէ։

—կառավարութիւն Ազարեան ազնուն վաճառական ընկերութեան ձեռքով ապսպրած է նորէն 100.000 վճռանկիւնի փողով հրացան Ամերիկայի Բրովիտէնս թուղ անուն ընկերութենան։ Եւրոպայի շատ երևելի ընկերութիւններ Չանացին առնել այս գործը, բայց չյաջողեցան։ Օսմանեան կառավարութեան համար Ամերիկայի մէջ ապսպրուած այս տեսակ հրացաններուն թիւը կը հասնի ասոր 600,000 ի։ Նաև Ամերիկայէն յիսուն միլիոն ֆըլաֆօ, և վերոյիշեալ հրացաններուն համար յիսուն միլիոն կապարեայ գնդակ ապսպրուած են։

—Բէրլ կոչուած Գերմանական թերթ դանօթներէն 60 հատ գնելու համար վալիտէ Սուլթան 20,000 Օսմանեան լիրա չնորհած է։

—Կ'ըսուի թէ Բումելիի երկաթուղեայ վերաբերեալ բոլոր գործերը քննելու և որոշելու նպատակաւ նոր Մասնաժողով մը կազմուած է կայսերական իրատէյով։ Այս Մասնաժողովին տեղը պիտի ըլլայ Ադրիանուպօլիս։

—Ադրիանուպօլեայ պաշտօնական լրագրին խօսքին նայելով, քանի մը չաբաթ առաջ երեք Գաղխայի ճարտարապետները կողոպտող աւազակայ խումբէն եղող Հալիլ անուն աւազակը բռնուած է։ Հալիլի ընկերն իսլամ մահացու վէրք մը առնելէն ետքը ձերբակալ եղած է, խումբին ծնօդեալ մասն ալ բռնուած է։

—Եդիպտոսի Խըտիւն այս անգամ կոստանդնուպօլսէն մեկնելէն առաջ Պէպէքի մէջ Բրուսիացի աղջկանց դըպրոցին դլխաւոր վարժուհին Խըտիւին ներկայանալով իմացուց դպրոցին կատարելութիւնը, և հիմա ի պատասխանի՝ ընդունած է Խըտիւէն 100 լիրա։ Այս գումարը ղրկուեցաւ դպրոցին վարժուհւոյն Բրուսիոյ դեսպանին ձեռքով, որ անցեալ Չորեքշաբթի մարդասիրաբար այցելութիւն ըրաւ յիշեալ դպրոցին ի Պէպէք, և իմացուց թէ այն գումարն իր քոմըն է։

—Հայտար Փաշային մինչև Նիկոմիդիա և անկէ դարձեալ Պոլիս մօտերս երկաթուղով ճամբորդութիւն մը ընելով, պատեհութիւն ունեցանք յիշեալ երկաթուղին քննելու։ Ճամբուն յատակն աղեկ չհնուած կ'երևի։ Կէպզէի մօտ երկաթի կամուրջը, որ Բեզդիոյ մէջ չհնուեցաւ, շատ դեղեցիկ և հաստաչէն է։ Կէպզէյէն անդին քիչ մը հեռուն շատ ծախքով և մեծ ճարտարութեամբ լայն և շատ ապահով ճամբայ մը բացուած է պինդ ապառաժներու մէջէն որ ծովուն վրայ երկնցած են։ Կառքերը, որ Գաղխա չհնուեցան, թէև աժան տեսակէ են, դեղեցիկ են և հանգիստ կը տանին։ Հայտար փաշային մինչև Նիկոմիդիա իբր 60 մղոն ճամբան շատ հանգիստ ըրինք իբր 3½ ժամու մէջ։ Երրորդ առաջիճանին համար առնուած վարձքն է 18½ դահեկան, բանուկ ատակ։ դահեկան մ'ալ կը տրուի չոգենաւին՝ Հայտար փաշային մինչև Ղալաթիա։ Այս պէս վարձուն տակաւութեանը համար Նիկոմիդիայէն Պոլիս եկող ճամբորդաց շատ քիչը երկաթուղին թողլով չոգենաւ կը մտնեն, թէև չոգենաւին ընկերութիւնը ճամբուն վարձքը 15 դահեկանի իջեցուցած է։ Երկաթուղւոյն ծովեղերքէն անցած տեղերուն վրայ շատ դեղեցիկ է տեսարանը, և ճամբորդութեան ներքութիւնը շատ կը մեղմացնէ։ Երկաթուղւոյն երկու ծայրերը չհնուած կայարանները, և ճամբուն վրայ կառախուճին դիպ առած ուրիշ տեղերը եղածներն ալ դեղեցիկ են, և ոմանց առջևը կան նաև բուրաստաններ սիրուն ծաղիկներով ղարդարուած։ Այսօրմէ դեռ օրը մէկ կառչու կայ Հայտար փաշայէ մինչև Նիկոմիդիա, բայց չուտով կառչու մ'ալ աւելցնել կը խորհուի։ կառախուճքը քաշող տեղաշարժ մեքենաներուն նըւաղութեանը համար երկաթուղւոյն դործը դժուար է ընդարձակել. ուղևորներու երթևեկութեան համար միայն հաղիւ կը բաւեն տեղաշարժ մեքենայք. վաճառաց համար դեռ շատ կառչու չկայ։ Զարմանալի է որ Նիկոմիդիոյ կողմը տեղաշարժ մեքենան դարձնելու դործիք մը դեռ չհնուած չէ, ուստի և Նիկոմիդիայէն ի դարձին՝ մեքենան դլուխը ետին ըլլալով կը քաշէ կառքերը։ Երկաթուղւոյն Ընդղիայի տնօրէնին Միսթըր կրինվուտ մեծ պատիւ է որ երկաթուղին բանեցընելու համար պէտք եղած կառքերը, դործիքները և ուրիշ բաները պատրաստելու և ճամբուն բոլոր դործը կարգի դնելու մասին այսչափ յաջողութիւն դտած է։

Կ'ըսուի թէ կառքերը մինչև կէպզէ բանելու սկսէլեն ի վեր, այսինքն երբ տասնուվեց ամսուան միջոցէ հետէ, կառչուն բանեցնելու համար եղած բոլոր ծախքը, հանքային ածուխն ալ մէջ բլլալով, ուղևորներէն առնուած վարձով վճարուած է։ Ուստի յայտնի է որ, եթէ ճամբան բանեցնելու համար պէտք եղած միջոցները ձեռք բերուին և աղեկ տնօրէնութիւն ըլլայ, կառավարութիւնը կարող պիտի ըլլայ բաւական եկամուտ առնել այս երկաթուղիէն։

Յարօրինակ, և թէ այս երկրին, թէ ուրիշ տեղերու երկաթուղեայ պատմութեանը մէջ անլսուր բանը սա է, որ այս Նիկոմիդիոյ երկաթուղւոյն վրայ կառչուոց երթևեկութեան ժամերը որոշուած են ըստ արևելեան կերպի ժամերը հաշուելու եղանակին համեմատ։ Այս պատճառաւ հարկ կ'ըլլայ ժամացոյցներն ամէն օր փոխել, և երբ ճամբուն դործը չատնայ, պիտի պատճառէ չարունակ նեղութիւն և վտանգ։ Արդարև դրեթէ անկարելի էր երկաթուղին բանեցնել ըստ արևելեան ժամուց, եթէ հեռադրի դիւաը պարգևուած չըլլար Աստուծմէ։ Բայց չենք կարծեր թէ այս դիւրը արուեցաւ այս անտեղութեան նեղուկ ըլլալու համար։

Նիկոմիդիոյ մէջէն մինչև Սապանճայի լիճը չհնուելու ճամբան փութով յառաջ կը տարուի։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՍԻՈՆԱՐԱՑ ԸՆԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷՆ

Խմբագիր Հ. Գ. ԿՐԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՅԱՃԵԱՆ

Ֆինճանճըլար փողոց, Ամերիկան խան։